ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 172. Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը

1. Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

3.1. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ դատարանի որոշման հիման վրա:

3.2. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 125.1-րդ հոդվածով, 131-րդ հոդվածով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 134-րդ հոդվածով, 168-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 182-րդ հոդվածով, 189.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190-րդ հոդվածով, 190.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 191-րդ հոդվածով, 194-րդ հոդվածով, 200-203-րդ հոդվածներով, 205-րդ հոդվածով, 207-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 216-րդ հոդվածի 3-րդ մասով, 217-րդ հոդվածով, 217.1-րդ հոդվածով, 218-րդ հոդվածով, 220-224-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածով, 262-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 281-րդ հոդվածով, 284-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 286-րդ հոդվածի 3-րդ

մասով, 287-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 288-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 289-րդ հոդվածի հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 295-րդ հոդվածով, 296-րդ հոդվածի 3-րդ մասով, 297-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-313-րդ հոդվածներով, 314.2-րդ հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 332-րդ հոդվածով հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, եթե ներկայացվել են ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող: Այս դեպքում դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց 10 օր առաջ ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, որի վերաբերյալ ստացվել են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

3.3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա:

4. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողը և անկախ սեփականության ձևից՝ ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության աշխատողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում: